

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
33

Yerevan – 2022

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
33

Ереван – 2022

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

33

Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Վ. Թորոսյան, Թ. Վ. Լինտ, Ա. Մուլթաֆյան, Ա. Շահնազարյան, Գ. Գասպարյան, Օ. Վարդազարյան, Ա. Թամրազյան, Հ. Համբարձումյան:

«Բանբեր Մատենադարանի» 33, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ին-տ. երևան, 2022: 536 էջ (ներդիր 16 էջ):

Հ 33/խմբ. Վ. Տեր-Ղևոնդյան, 2022:

«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված են պատմությունը, բանասիրությունը, արվեստին և բնագիտությունը նվիրված հոդվածներ, երիտասարդական 7-րդ գիտաժողովի (2021 թ. նոյեմբերի 25-27) նյութեր, հրապարակումներ և մի հաղորդում:

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
NATURAL SCIENCES
ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ

ՍՏԵԼԼԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

ՔՍՈՒՔԻ ԵՎ ՕԾԱՆԵԼԻՔԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵՂԱԳԻՐԸ ՔՍԵՆՈՖՈՆԻ
«ԱՆԱԲԱՍԻՍ» ԵՐԿՐՈՒՄ

Բանալի բառեր՝ Դեղագիր, քսուք, բուրավետ յուղ, Քսենոֆոն, խոզի ճարպ, քնջուկի և դառը նշի յուղ, բեկնի խեժ, դեղագիտություն, Ամիր-դովլաթ Ամասիացի, եթերային յուղեր, չհագեցած ճարպաթթուներ:

Հնուց ի վեր հայտնի էին բուսական աշխարհի բուրուճնավետ յուղերն ու խեժերը և որոշ կենդանիների հատուկ մշկագեղձերի արտազատուկները (մուշկ, համպար, կղբու ձու), որոնք օգտագործվում էին քսուքների ու օժանելիքների պատրաստման համար: Նրանցից շատերը լայն կիրառում էին ստացելել դեղագործության, բժշկության և կոսմետիկայի (գեղարարության) բնագավառներում, եկեղեցական արարողություններում (օրինակ՝ մյուռոնը, խունկը), ինչպես նաև որպես օժանելիք և համեմունք:

Այդ նյութերի մասին տեղեկություններ են պահպանվել Հին եգիպտոսի պապիրուսներում, Միջագետքի սեպագիր արձանագրություններում, հին Հունաստանի ու Հռոմի ֆարմակոգնոզիաներում ու հանրագիտարաններում¹, միջնադարյան արաբական մոֆրադաթներում, հայկական ձեռագիր դեղագիտարաններում, ինչպես նաև Ե դարի հայ պատմիչներ Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու և այլոց «Պատմություն հայոց» երկերում ու «Աշխարհացոյց»-ում²:

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, բժշկագիտության դոկտոր, stellavard@yahoo.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ ապրիլի 10, 2022, գրախոսելու օրը՝ հունիսի 4, 2022:

¹ S. A. Vardanyan, Amirdovlat Amasiatsi. A Fifteenth-Century Armenian Natural Historian and Physician, Delmar, New York, 1999, p. 11.

² Ս. Վարդանյան, Հայաստանի բժշկության պատմություն, Երևան, 2000, էջ 78-80, S. A. Vardanyan, Amirdovlat Amasiatsi... p. 12:

Ինչ վերաբերում է հին Հայաստանի բուրուճնավետ յուղերի ու խեժերի նկարագրությունը, ապա առաջին անգամ նրանց հանդիպում ենք հին հույն հեղինակ Քսենոֆոնի (Ք.ա. մոտ. 430-355/354 թթ.) «Անաբասիս» երկում (15): Չէ որ հոմեոպատիկ շրջանի մեծ գիտնականներ Գիոսկորիդեսը և Պլինիոս Ավագը, որոնք բազմիցս անդրադարձել են իրենց գործերում “*Materia medica*” և «Բնական պատմություն» հայկական դեղամիջոցներին, ապրել են Քսենոֆոնից համարյա կես հազարամյակ հետո: «Անաբասիս»-ը նվիրված էր հունապարսկական հարաբերությունների այն բարդ շրջանին (Ք.ա.401-399 թթ.), երբ Պարսից արքա Դարեհ Ներկորդի մահվանից հետո նրա որդիներին թագաժառանգ Արտաքսերքսի ու Կյուրոս Կրտսերի միջև տեղի ունեցած պատերազմում հույն վարձկան զորքը վերջինիս կողմնակիցն էր, բայց նրա սպանությունից հետո Կունաքսի մարտում, Բաբելոնի մոտ, չնայած տարած հաղթանակի, ստիպված էր հեռանալ Փոքր Ասիայից, հանդիպելով տեղացի բնակչության զգալի դիմադրությանը:

Հույն մեծ փիլիսոփա Սոկրատեսի (Ք.ա. մոտ. 470-399 թթ.) աշակերտ ու կենսագիր և բժշկության հայր Հիպոկրատեսի (Ք.ա. մոտ. 460-377 թթ.) կրտսեր ժամանակակից, հելլենական գիտության կենտրոն Աթենքի քաղաքացի Քսենոֆոնն այստեղ հանդես էր գալիս ոչ միայն որպես հեղինակ, այլև դեպքերի անմիջական մասնակից ու նույնիսկ զորավար, ստրատեգ, որը, չնայած մեծ կորուստների, հայրենիք վերադարձրեց հունական զորքը:

«Անաբասիս»-ի յոթ գրքերից IV և V-ում նկարագրված է այդ նահանջի դժվարին հատվածը՝ հյուսիսարևմտյան Հայաստանը հունվարյան սառնամանիքների շրջանում: Սակայն հելլենական գիտության բազում ճյուղերի, այդ թվում և բժշկության, փայլուն գիտակ Քսենոֆոնի աչքից չէր վրիպել ոչ միայն երկրի հարստությունը կամ իր խոսքեր՝ «լիությունը» բնության բարիքներով, այլ նաև հայկական մշակույթի որոշակի մակարդակը: Նա անդրադարձել էր հայերի ապրելակերպին, բարքերին, սննդին, բժշկությանն ու բուժական հնարքներին՝ իր երկում թողնելով քսուքի և օձանելիքի պատրաստման հին հայկական դեղագրի եզակի մի նկարագրություն:

Հայ հեղինակներից Քսենոֆոնի երկին անդրադարձել են հայագետ Գրիգոր Ղազարյանը «Հայաստանը և հայերը ըստ Քսենոֆոնի» գրքում³, վաստակաշատ պատմաբան Լեոն (Առաքել Բաբախանյան) իր «Հայոց պատմության» առաջին հատորում⁴, իսկ բժշկագիտական տեսանկյունից՝ անվանի բժշկապատմաբան Լեոն Հովհաննիսյանն «*История медицины в Армении*» հիմնահատորյակի

³ Գ. Ղազարյան, Հայաստանը և հայերը ըստ Քսենոֆոնի, Թիֆլիս, 1908:

⁴ Լեո, Հայոց պատմություն, երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1966, էջ 255-257:

առաջին հատորում⁵ և մենք՝ «Հայաստանի բժշկության պատմություն» մենագրությունում⁶:

Քսենոֆոնի այդ գլուխգործոցը թարգմանվել է քաղաքակիրթ ազգերի բուրր լեզուներով, այդ թվում՝ գերմաներեն, ռուսերեն ու հայերեն⁷: Բերենք մեզ հետաքրքրող հատվածը «Անաբասիս»-ի հայերեն թարգմանության չորրորդ գրքի չորրորդ գլխից. «Այստեղ (Հայաստանում) յուզի (քսուքի) շատ տեսակներ կային, որ գործածվում էին ձիթապտղի յուզի փոխարեն, (նրանք պարունակում են) խոզաճարպ և քնջութի և դառը նշի և բեկկնի յուզ (և խեժ): Կար նաև սրանցից պատրաստված մեռոն (օճանելիք)»⁸:

Հարց է ծագում, արդյո՞ք կիրառվել են անտիկ շրջանից հետո այդ ղեղամիջոցները միջնադարյան հայկական բժշկարաններում: Փորձենք պատասխանել հարցին՝ վերծանելով նշված ղեղագիրն ու համեմատելով նրա բաղադրամասերը ժե դարի հայ բժշկապետ Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց անպէտ» (1478-1482) ղեղագիտության հանրագիտարանում առկա նյութերի հետ:

Հենց սկզբից ևեթ պարզ էր դարձել, որ վերոհիշյալ չորս բաղադրամասերն այստեղ մանրամասնորեն նկարագրված են: Մնում էր ուսումնասիրել նրանց կիրառումն ու բուժական սպեկտրը՝ տեսնելու համար, թե որքանով էր այն հարստացել Քսենոֆոնից հետո անցած երկու հազարամյակում ու համեմատել արդի բժշկության ու ղեղագիտության տվյալների հետ: Ուսումնասիրության ընթացքում հարկ եղավ նաև վերծանել Ամիրդովլաթի բնագրի օտար բժշկական եզրերը՝ հիվանդությունների ու ղեղերի արաբերեն ու պարսկերեն անվանումները, որոնք այլ մեկնաբանությունների հետ միասին ավելացրել ենք կլոր փակագծերում:

Այժմ անդրադառնանք ղեղագրի առաջին բաղադրամասին՝ խոզի ճարպին: «Անգիտաց անպէտ»-ում ասված է. «Շահմ ալ խնգիր, որ է խոզին ճրագուն. լան այն է, որ(խոզն) որձ լինի եւ մատղաշ. եւ իր գիճութիւնն աւելի է քան ամենայն ճրագուն. եւ իր ուժն մաւտիկ է հոռոմ ձիթին... եւ աւզտէ ուռէցնուն եւ խոցերուն, որ ի յաղիքն լինայ. եւ աւզտէ ամենայն գազանահարի. եւ իր առնելուն չաքն Գ (3) դրամ է (1 դրամը հավասար է 2, 94 գրամի)»⁹:

⁵ Л. А. Оганесян, *История медицины в Армении в 5 томах, т. 1, Ереван, 1946, с. 59.*

⁶ Ս. Վարդանյան, *Հայաստանի բժշկության պատմություն, Երևան, 2000, էջ, 30:*

⁷ Ксенофонт, *Анабасис*, перевод, статья и примечания М. И. Максимовой, Москва-Ленинград, 1951; Xenophon, *Anabasis*, Zug der Zehntausend, griechisch-deutsch, Berlin: Artemis & Winkler, 2014, vierte Auflage.

⁸ Քսենոֆոն, *Անաբասիս*, թարգմանությամբ Սիմոն Կրկյաշարյանի, Երևան, 1970, էջ, 94:

⁹ Ամիրդովլաթ Ամասիացի, *Անգիտաց անպէտ*, խմբ. *Կարապետ Բամաջչանի*, Վիեննա, 1926, էջ 421:

Այստեղ պետք է նշել, որ խոզի ճարպը կամ ճրագուն պատահական չէր բերված դեղագրում: Ըստ Ամիրդովլաթի՝ այն օժտված է հակատոքսիկ ու հակաբորբոքային հատկություններով, իսկ իր ազդեցությամբ մոտ է հոռոմ ձիթին կամ ձիթապտղի յուղին՝ *Oleum olivarium*, որը հնում համարվում էր յուղերից ամենակատարյալը: Ըստ ժամանակակից դեղագիտության տվյալների՝ վերջինս հարուստ է B, D, E վիտամիններով և կիրառվում է բժշկության մեջ նաև այսօր¹⁰:

Դեղագրի երկրորդ բաղադրամասը քնշուլթը կամ սումսումն է՝ *Sesamum orientale* L. (Fam. Pedaliaceae): Քնշուլթի հայրենիքն Աֆրիկան է, սակայն այն մշակվում է նաև Հնդկաստանում, Չինաստանում ու մի շարք արևադարձային երկրներում¹¹: Ըստ արդի դեղագիտության տվյալների՝ քնշուլթի սերմերը հարուստ են վիտամիններով (հատկապես E վիտամինով) ու հանքային նյութերով (հատկապես ցինկով), որոնք անհրաժեշտ են օրգանիզմի կենսական գործընթացների բնականոն աշխատանքի ապահովման համար: Քնշուլթի յուղը պարունակում է նաև չհագեցած ճարպաթթուներ: Հիշատակվում է Հիպոկրատեսի աշխատություններում¹²: Հնում օգտագործվել է բժշկության ու գեղարարության մեջ, իսկ սերմերը՝ նաև այսօր որպես համեմունք՝ հրուշակեղեն ու հաց թխելու ժամանակ:

Ամիրդովլաթ Ամասիացին «Անգիտաց անպէտ»-ում հետևյալն է գրում քնշուլթի կամ սումսումի մասին. «լան այն է որ նոր լինի... կակղացնող է եւ հալող է. եւ թէ զտերևն (ու սերմն) եփես ջրով եւ զմազն լուանաս՝ յերկանցնէ եւ կոկ առնէ, եւ գլխուն բորին ճլէ (փայլ) տայ. եւ զըղեղն գէճ (խոնավ) պահէ. եւ աւգտէ հին թաշանուճին (ջղածգուլյուն). եւ թէ եփես եւ տաս հին հագին՝ աւգտէ. եւ զձայնն որդորէ. եւ զկաթն աւելցնէ. եւ զփորն կակղացնէ եւ զսերմն աւելցնէ. եւ թէ եփես՝ աւգտէ ործկալուն. եւ զկանացն արունն բանայ. եւ զտղան ի փորուն կու ձգէ. եւ կու գիրացնէ. եւ զմեռած արունն (կապտուկ) կու աղէկցնէ եւ չորութիւնն կու տանի. եւ աւճահարի աւգտէ... եւ թէ կտաւատ խառնես եւ ուտես՝ զմերձաւորութիւնն յաւելցնէ. եւ իր առնելուն չաքն Բ (2) դրամ է»¹³:

Ինչպես տեսնում ենք, հայ բժշկապետը նշում է քնշուլթի սերմերի թուրմի և յուղի փափկացնող ու հակաբորբոքային հատկությունները մագերի, մաշկի, ձայնալարերի ու թոքերի հիվանդությունների ժամանակ, ինչպես նաև նրանց զգալի հորմոնալ ազդեցությունը կանանց ու տղամարդկանց սեռական գեղձերի

¹⁰ С. Я. Золотницкая, *Лекарственные ресурсы флоры Армении* в 2 томах. т. 2, Ереван, 1965, с. 196.

¹¹ Ф. И. Ибрагимов, В. С. Ибрагимова, *Основные лекарственные средства китайской медицины*, Москва, 1960, с. 240-242.

¹² С. Ковнер, *Очерки истории медицины. Гиппократ*, вып. 2, Киев, 1883, с. 387.

¹³ Ամիրդովլաթ Ամասիացի, *Անգիտաց անպէտ*, էջ 539-540:

թուլության ու հիվանդությունների դեպքում. հատկություններ, որոնք, ըստ արդի տվյալների, պայմանավորված են եթերային յուղերի, *E* վիտամինի ու չհագեցած ճարպաթթուների առկայությամբ¹⁴:

Դեղագրի երրորդ բաղադրամասը դառը կամ լեղի նուշն է *Prunus amygdalus var. amara syn. Amygdalus amara Hayne (Fam. Rosaceae)*: Լեղի նշի սերմերը, ըստ արդի տվյալների, պարունակում են ճարպայուղ, որը հարուստ է եթերային յուղերով, նաև՝ ամիգդալին գլյուկոզիդ ու թունավոր կապտաթթու – *HCN*¹⁵: Լեղի նշի յուղը հիշատակվում է Հիպոկրատի գործերում¹⁶: Օգտագործվել է բժշկության և գեղարարության ոլորտում, իսկ շնորհիվ սուր հոտի՝ նաև որպես օժանելիք:

«Անգիտաց անպէտ»-ում նրա մասին ասված է. «Լալզ ըլ մուռ, որ է լեղի նուշն... Լաւ լեղի նուշն այն է, որ մեծ եւ եղլի լինի...եւ իր խասիաթն այն է, որ զոջիլն կուսպաննէ. եւ թէ քալաֆին (պեպեններ) աւծես՝ տանի. եւ աւգտէ շարային (եղնջատենդ) եւ ղուպային (էկզեմա, որքին). եւ թէ հետ գինու խառնես եւ զգլուխն լուանաս, զթեփուկն ի գլխուն տանի. եւ թէ քան զգինիխմելն յառաջ Ե (5) հատ լեղի նուշ ուտես՝ զհարբենալն խափանէ: Եւ ասած է թէ աղուեսն հետ կերակրին լեղի նուշ ուտէ՝ մեռնի: Եւ զաշից լուան յաւելցնէ. եւ թէ հետ նշայի (օսլա) խառնես եւ տաս՝ աւգտէ արուն թքելուն (թոքախտին). եւ զթանծր խլտերն (հեղուկներ) ի կրծոցէն յիստկէ եւ սրբէ. եւ զգոզն բանայ. եւ զգոզին բռնուիլն տանի. եւ զքարն մանտրէ ի բշտէն եւ հանէ, բայց աղեց զեն (վնաս) կառնէ. եւ զիր շարութիւնն տանի քաղցր նուշն. եւ նապաթն (սառնաշաքար), եւ խաշխաշն. Եւ ծառն ամենայն դիմօք զերդ զինքն է. եւ իր եղն այլ աւգտէ ակնչին ցաւուն»: Իսկ «Անգիտաց անպէտ» գրքի առաջին խմբագիր ժէ դարի հայ բժշկապետ Բունիաթ Սեբաստացին դրան ավելացրել է. «Եվ թէ զլեղի նուշն ծեծեն եւ եփեն եւ ի գինուն կարասին մէջն ձգեն՝ խիստ յիստակ անէ զգինին. փորձիվ է. նոյն գունակ զպղտոր ջուրն յիստկէ խիստ»¹⁷:

Համաձայն Ամիրդովլաթի տվյալների, լեղի նուշը կիրառվել է մաշկի և մազերի խնամքի, ինչպես նաև նրանց արատների ու հիվանդությունների բուժման նպատակով: Սակայն ներքին օգտագործման համար այն հազվադեպ է նշանակվել, հաշվի առնելով կապտաթթվի թունավոր հատկությունները: «Անգիտաց անպէտ»-ում նույնիսկ նկարագրված է աղվեսի վրա դրած մի փորձ, երբ կենդանին սատկել էր կերի հետ տված լեղի նշի սերմերից: Այդ փորձը ժամանակին նկարագրել էր Իբն Սինան¹⁸:

¹⁴ Амирдовлат Амасиаци, *Ненужное для неучей*, комментированный перевод С. А. Варданяна, Москва, 1990, с. 551.

¹⁵ С. Я. Золотническая, *Лекарственные ресурсы флоры Армении...*, т. 2, с. 81.

¹⁶ С. Ковнер, *Очерки истории медицины*. Гиппократ, с. 387.

¹⁷ Ամիրդովլաթ Ամասիացի, *Անգիտաց անպէտ*, էջ 196:

¹⁸ Ибн Сина, *Канон врачебной науки*, в 5 книгах, кн. 2, Ташкент, 1982, с. 371.

Այսուամենայնիվ բացառված չէր փոքր դեղաչափերի ներքին կիրառումը, քանի որ «Անգիտաց անպէտ»-ում խոսվում է լեղի նշի հակաբորբոքային ու ցավազրկող հատկությունների մասին աչքի, ականջի և թոքերի հիվանդությունների բուժման դեպքում, ինչպես նաև նրա միզամուղ և քար մաշեցնող ազդեցությունը միզաքարային հիվանդության ժամանակ: Միջնադարյան բժշկապետերին հայտնի էր նաև, որ գինի խմելուց առաջ կերած դառը նշի հինգ հատիկը խափանում է հարբեցումը: Գուցե կարիք լինի այսօր զգուշութեամբ վերահաստատել հին փորձի իսկությունը:

Դեղագրի չորրորդ բաղադրամասը բևեկնի՝ *Pistacia terebinthus* L. (Fam. Anacardiaceae) յուղն ու խեժն է: Բևեկնի հայրենիքը Միջերկրական ծովի առափնյա երկրներն են: Սրբազան ծառերից էր, որոնք ապրում են ամբողջ մեկ հազարամյակ: Հիշատակվում է Աստվածաշնչում: Սրբազան մյուռտնի բաղադրամասերից մեկն է: Նրա բուրուճնավետ խեժը և յուղը, ըստ արդի տվյալների, հարուստ են եթերայուղերով և օգտագործվել են գեղարարության ու դեղագործության մեջ, նաև որպես օձանելիք:

Այդ նույն ազգից են հերձին՝ *Pistacia lentiscus* L.¹⁹ ու պիստակենին՝ *Pistacia vera* L., որոնք իրենց բաղադրությամբ մոտ են բևեկնին: Նրանցից հերձին, ինչպես և որոշ դեպքերում Հայաստանի բուսաշխարհի *Pistacia* ազգի միակ ներկայացուցիչ խնկենին կամ բթատերե պիստակենին՝ *Pistacia mutica* Fisch. et C.A. Mey կարող են փոխարինել մյուռտնում բևեկնի խեժը²⁰:

Հետաքրքիր է նշել, որ կենդանական ծագում ունեցող որոշ բուրուճնավետ խեժեր, օրինակ՝ կղբու ձուճ *Castoreum*, որն արու կղբի մշկագեղձի արտազատուկն է, ու մուշկը՝ *Moschus*, նույնպես հարուստ են եթերայուղերով ու իրենց բուժական սպեկտրով մոտ են դեղագրի վերոհիշյալ բուսական բաղադրամասերին²¹:

Բևեկնի վերաբերյալ «Անգիտաց անպէտ»-ում կարդում ենք. «Բևեկ. ինքն էգ եւ որձ լինի. եւ լաւն այն է, որ խոշոր լինի եւ թաժայ... հալող է. աւգտէ ֆալճին (անդամալուծություն) եւ լակուային (դիմային նյարդի անդամալուծություն). եւ թէ թզով եւ նատրունով (սոդա) աւժես՝ գքալաֆն տանի. եւ թէ զիր փայտն մուսֆաք (ատամնափորիչ) առնեն՝ զակոին միսն ամրացնէ. եւ իր խէժն աւգտէ հով հազին. եւ թէ խմցնես եւ կամ ծեծես՝ աւգտէ փայծղան ուռեցին եւ իրիկամաց հովութեան եւ արգանդին եւ կոնակին ցաւուն. եւ իր խէժն զփորն կու կակղացնէ. եւ ծերոց շատ աւգտութիւն առնէ. եւ զիր խէժն քացխով եւ եղով խառնես եւ

¹⁹ S. A. Vardanyan, *Amirdovlat Amasiatsi...* p. 88.

²⁰ Ն. Խանջյան, Ս. Գալստյան, «Սրբալույս մյուռտնի բույսերի բնագիտական մեկնաբանություն», *Սրբալույս մյուռտն*, Ս. Էմիհաժին, 2001, էջ 74, Ս. Я. Золотницкая, *Лекарственные ресурсы флоры Армении ...*, т. 2, с. 134-136:

²¹ *Амирдовлат Амасиаци, Ненужное для неучей*, с. 684; S. A. Vardanyan, *Amirdovlat Amasiatsi...* p. 92.

աւծես կրնկին շուկակին (ճեղքվածք), աւգտէ. եւ թէ կաղամպով խառնես եւ աւծես ըղնկան պարասին (բոր), զմիսն կու բուսցնէ. եւ իր ձէթն բան կու մտէ. եւ շի թողուր, որ մարդ կերակուր ուտէ. զբարքն (ախորժակ) կու կապէ. եւ զիր շարութիւնն տանի սերկելին. եւ իր փոխանն ֆստուխն է... եւ զմերձաւորութիւնն յավելցնէ. եւ թէ զիր տակն ծեծես եւ սպեղանի առնես՝ մազ բուսցնէ. եւ աւգտէ տայուսայլապին (մազաթափություն), բայց իր զենն այն է, որ գլուխ կու ցաւցնէ. եւ զիր շարութիւնն տանի թթու իրուին»²²:

Ինչպես տեսնում ենք բերված տվյալներից, բեկկնի խեժը և յուղը, վերոհիշյալ դեղագրի մնացած երեք բաղադրամասերի նման, միջնադարյան հայ բժշկության մեջ կիրառվում էին մաշկի, մազերի ու լնդերի խնամքի և վերքերի բուժման համար: Օգտակար էին նաև նյարդային հիվանդությունների դեպքում: Ոչ պակաս դեր էին խաղում նրանք մաշկի, շնչառական օրգանների, արգանդի ու երիկամների վարակիչ և ալերգիկ հիվանդությունների կանխարգելման ու բուժման ոլորտում, միաժամանակ բարձրացնելով օրգանիզմի տոնուսը և սեռական կարողությունը²³ (7, Շ. 527-552):

Ի դեպ՝ բեկկնի ձեթը կապում էր ախորժակը, իսկ քնջութինը՝ բացում և գիրացնում: Ի տարբերություն արդի մտածելակերպի՝ միջնադարում առավելությունը տրվում էր գիրությունը և «գիրացնող» դեղերին և ոչ թե նիհարությանն ու «նիհարեցնողներին»: Սակայն ծանր հիվանդության, օրինակ՝ թոքախտի պարագայում, առաջնությունն այսօր էլ անշուշտ տրվում է «գիրացնողներին»:

Հատուկ նշանակություն ունեին դեղագրի բաղադրամասերից երկուսի՝ բեկկնի ու լեղի նշի բուրմունքն ու հոտը: Հաճույք պատճառելուց բացի, նրանք միաժամանակ բարերար ազդեցություն ունեին հիվանդի հոգեվիճակի վրա և նպաստում էին բուժմանն ու առողջության վերականգմանը: Ուստի պատահական չէ, որ «Անաբասին»-ում բերված դեղագրի հիման վրա հայերը հնում պատրաստում էին ոչ միայն քսուքներ, այլև օժանելիքներ:

Իսկ այժմ վերադառնանք Քսենոֆոնի բնագրին: Փորձենք պատասխանել բնական մի հարցի, որը ծագում է յուրաքանչյուր ժամանակակից ընթերցողի կամ ունկնդրի մոտ, թե ինչու է Քսենոֆոնն ընդհանրապես անդրադարձել իր գրքում քսուքի ու օժանելիքի պատրաստման հին հայկական դեղագրին:

Բանն այն է, որ նա ոչ միայն գիտնական ու գրող էր, այլ նաև հունական զորքի գլխավոր հրամանատար. մի զորքի, որը Բաբելոնի մոտ պարսիկներին ծանր հարված հասցնելուց հետո, ստիպված եղավ բռնել նահանջի ամոթալի ուղին և շոգ Միջագետքից Տիգրիս ու Եփրատ գետերի հոսանքով Հայաստան

²² Ամիրզովլաթ Ամասիացի, *Անգիտաց անպէտ*, էջ 107:

²³ Амирдовлат Амасиаци, *Ненужное для неучей*, с. 527-552.

հասնել, արյունաքամ լինելով քրդերի նախնիներ «կարդուխների»²⁴ վայրագ հարձակումներից ու տառապելով լեռնային երկրի ձմեռվա անսովոր ցրտից: Հույներն արդեն կորցրել էին իրենց տաս հազարանոց զորքի համարյա կեսը և ծանրաբեռնված էին բազում վիրավորներով ու ցրտահարվածներով, որոնք օգնության կարիք ունեին:

Եվ հայերը չհապաղեցին օգնության հասնել՝ տրամադրելով սնունդ և դեղամիջոցներ, այդ թվում վերոհիշյալ դեղագրում նշված բուժիչ և կազդուրիչ նյութերը: Պատահական չէ, որ «Անաբասիս»-ի այդ նույն IV գլխում, որտեղ բերված է քսուքի ու օծանելիքի հայկական դեղագիրը, Քսենոֆոնը, որն ամենայն հավանականությամբ նաև զորքի ռազմական բժիշկն էր, նկարագրել է, թե ինչպես է ինքն այդ քսուքով բուժել զինվորների և իր սեփական ցրտահարված ոտքերը: Դրա շնորհիվ, հույները հնարավորություն ստացան կարճ դադարից հետո շարունակել իրենց ճանապարհը դեպի Սև ծով ու Տրապիզոն քաղաք, ապա նահանջի վերջնակետ Բյուզանդիոն՝ ապագա Կոստանդնուպոլիս, որտեղ հայ բժշկապետ Ամիրդովլաթ Ամասիացին երկու հազարամյակ հետո նկարագրեց իր «Անգիտաց անպէտ»-ում վերոհիշյալ դեղագրի բաղադրամասերը:

Իսկ Քսենոֆոնը, տարիներ անց, Հունաստանի իր տաքուկ կալվածքում՝ Օլիմպիայում, շարադրելով նահանջի ողբերգական իրադարձությունները, չմոռացավ հիշատակել Հայաստանն ու հայերին և թողեց քսուքի ու օծանելիքի պատրաստման հին հայկական դեղագրերից մեկն «Անաբասիս» երկում, այսպիսով դառնալով հայ դեղագիտության ու բժշկության ձեռքբերումների առաջին արձանագրողն անտիկ շրջանում:

STELLA VARDANYAN

THE ANCIENT ARMENIAN RECIPE FOR PREPARING OINTMENT
AND INCENSE ACCORDING TO XENOPHON'S ANABASIS

Key words:

Recipe, ointment, incense, Xenophon, Anabasis, lard, sesame oil, bitter almonds, gum of turpentine tree, pharmacology, ancient and medieval Armenian medicine, Amirdovlat' Amasiats'i, *Useless for the Ignorants*, essential oils, unsaturated fatty acids, treatment of infectious and allergic diseases, Asia Minor, Armenia, Greek army, retreat.

The ancient Armenian recipe for preparing ointment and incense from the *Anabasis* by the ancient Greek historian Xenophon (5th-4th cc. BC) included four

²⁴ Աեռ, Հայոց պատմություն, Երկերի ժողովածու, հ.1, էջ 256:

ingredients: lard, sesame oil, bitter almonds and gum of turpentine tree, which have specific medicinal and cosmetic properties. The same components were used in medieval Armenian medicine, as witnessed by the medical encyclopedia: the book *Useless for the Ignorants* (1478–1482) of the outstanding 15th c. physician Amirdovlat‘ Amasiats‘i.

A comparative analysis of these data testifies to the continuity of experience between the two periods of development of Armenian medicine: ancient and medieval, separated by about two millennia. The study reveals new data on the therapeutic spectrum of the components of the above-mentioned medicinal prescription. The fragrant oils and gums were used to treat a number of infectious and allergic diseases of skin, nervous system and respiratory organs. They were also used to produce cosmetic products for skin, hair and oral cavity.

In two of the seven books of the *Anabasis* (IV and V), Xenophon, disciple and biographer of Socrates, a participant of the campaign, strategist and physician of the Greek army, described north-western Armenia, through which the army passed. A brilliant representative of Hellenic science and a junior contemporary of the father of medicine Hippocrates, he mentions the natural wealth of Armenia and describes the customs of the Armenians, their food, fragrant wines, beer and medicines, some of which are found in the works of Hippocrates.

Xenophon dealt with Armenian pharmacology and medicine because in 400 BC the Greek army, exhausted in bloody battles with the Karduchs, passed from the hot Mesopotamia to the mountainous Armenia during the January frosts and was burdened with a huge number of wounded and frost-bitten soldiers who needed assistance. The Armenians provided such assistance with food and medicines, and Xenophon left a copy of a recipe in the *Anabasis* (IV.4.13).

СТЕЛЛА ВАРДАНЯН

ДРЕВНИЙ АРМЯНСКИЙ РЕЦЕПТ ПРИГОТОВЛЕНИЯ МАЗИ И БЛАГОВОНΙΑ ИЗ «АНАБАСИСА» КСЕНОФОНТА

Ключевые слова: Рецепт, мазь, благовоние, Ксенофонт, «Анабасис», свиное сало, масло кунжута и горького миндаля, камедь терпентинного дерева, лекарствоведение, косметика, древняя и средневековая армянская медицина, Амирдовлат Амасиаци, «Ненужное для неучей», эфирные масла, ненасыщенные жирные кислоты, лечение инфекционных и аллергических болезней, Малая Азия, Армения, греческое войско, отступление.

В состав древнего армянского рецепта приготовления мази и благовония

из “Анабасиса” древнегреческого ученого Ксенофонта (V-IVвв. до н.э.) входили четыре компонента: свиное сало, масло кунжута, горький миндаль, имеющие специфические лекарственные и косметические свойства. Те же компоненты применялись в средневековой армянской медицине, по данным энциклопедии лекарственных средств – книги выдающегося врача XV века Амирдовлата Амасиаци “Ненужное для неучей” (1478-1482).

Сравнительный анализ этих данных свидетельствует о преемственности опыта между двумя периодами развития армянской медицины – древним и средневековым, разделенными двумя тысячелетиями. В ходе исследования были получены новые данные о лечебном спектре компонентов вышеуказанной лекарственной прописи. Душистые масла и камедесмолы использовались для лечения целого ряда инфекционных и аллергических болезней кожи, нервной системы, органов дыхания, желудочно-кишечного тракта и мочеполовой системы, а также в косметических целях для ухода за кожей, волосами, полостью рта и губами.

В двух из семи книг “Анабасиса” (IV и V) Ксенофонт, ученик и биограф великого философа Сократа и участник похода, стратег и врач греческого войска, описал северозападную Армению, через которую проходило войско. Блестящий представитель эллинской науки и младший современник отца медицины великого Гиппократ, он упоминает природные богатства Армении и описывает нравы и обычаи армян, их пищу, душистые вина и лекарственные средства, некоторые из которых встречаются в трудах Гиппократ.

Ксенофонт занимался вопросами лекарствоведения и медицины, так как греческое войско, до того измотанное в кровавых схватках с кардухами, предками курдов, из жаркой Месопотамии вступило в горную страну Армению в период январских морозов, отягощенное огромным количеством раненых и страдающих от обморожения. Армяне оказали помощь провиантом и лекарственными средствами, а Ксенофонт оставил в “Анабасисе” (IV.4.13) одну из армянских прописей приготовления мази.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Դանիելյան

Պաշտոնական նամակագրությունը և դիվանագիտական ընձաները
հայ-մոնղոլական հարաբերություններում..... 5

Ստյոպա Պետոյան

Վահան և Սմբատ Դադյանցիների գրահրատարակչական
գործունեությունը Շուշիում 1880-ական թթ. 33

Անի Ոսկանյան

Ադանայի նահանգի հայերի տնտեսության վերականգնման
փորձերը 1910-1914 թթ. 55

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Գլորգ Տէր-Վարդանեան

Յովհաննէս Վ. Զօհրապեանի ձեռագրական և բնագրագիտական վաստակը.
Ինֆնակենսագրականը..... 67

Օվսաննա Խաչատրյան

Գրիգոր Խլաթեցու կաֆաները որպես գանձարանային կաֆաների առաջին նմուշներ..... 91

Հայկ Համբարձումյան

Սննդային մոտիվները «Սասնա ծռեր» էպոսում և հայ
միջնադարյան գրականության մեջ. հերոսների նաշացանկը 105

Գառնիկ Ա. Հարությունյան

«Կտակ շարչարանաց»-ի կամ Ավագ ուրբաթի ֆարոգի՝ Սիմեոն
Ա. Երևանցի կաթողիկոսի խմբագրությունը 133

Հասմիկ Բադալյան

Կիրիկյան Հայաստանի Զորովանքը և գրչական ժառանգությունը 150

Դավիթ Սրկ. Սահակյան

Կրկին «Հանախասպատոմ հառերի» հեղինակի ու թվագրման հարցի շուրջ,
Աբրահամ Տերյանի մի հրատարակության առթիվ 165

ԱՐՎԵՍ

Իվեթ Թաշարյան, Սարա Լափորթ-Էֆթելիարյան

Մատենադարանի նորահայտ նկարագար դի էջ, որպես մշակութային
ազդեցությունների խորհրդանիշ 186

Միրանուշ Բեգլարյան

Թորոս Տարոնացու մանրանկարների պատկերագրության մարիամաբանական հեներ 196

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**Ստելլա Վարդանյան**

Քսուֆի և օժանելիֆի պատրաստման հին հայկական դեղագիրը
Քսենոֆոնի «Անաբասիս» երկում 215

Կարինե Մոսիկյան

Մարմնագննական (ֆիզիոգնոմիկական) երկերը Մատենադարանի ձեռագրերում 225

**ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ 7-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
(2021 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-27) ՆՅՈՒԹԵՐ**

Զոհրաբ Գևորգյան

Թուղթը, առօրեականությունը և հասարակական փոխակերպումները
Կիլիկյան Հայաստանում 248

Գևորգ Ղազարյան

Դոնվիակ պատարագի ավանդույթը Հայ Առաքելական եկեղեցու ծիսակարգում 259

Անդրանիկ Եսայան

Զակամ Գավառը ժէ դ.-ժԸ դ. Առաջին Քառորդին 285

Տիգրան Գրիգորյան

«Աղամի արարումը» թե՛ «Հին ատուրցն Աստուած».
Դանիել մարգարեի վախճանաբանական տեսիլքը Նորավանքում
(վերլուծություն ըստ կանոնական և պարականոն բնագրերի) 299

Շողակաթ Դևրիկյան

Գրիգոր Լուսավորչին ներկայացնող մեկէջյա փորագրանկարները 18-րդ դարում
Կոստանդնուպոլսում տպագրված երեք «Յայսմատուր»-ներում 331

Գրեհա Գասպարյան

Նոր Զուղայում նկարագարողված ՄՄ 6772 Ավետարանի մեկ
էջը արևմտաբրիտանական արվեստի համատեքստում 342

Արմինե Պետրոսյան

Թոչնամարտի թեման Հայաստանի Ժ-ԺԴ դարերի եկեղեցական ֆանդակում.
պատկերագրությունը և խորհրդաբանական եզրերը 353

Վահե Ավետիսյան

Հույն (Բյուզանդական) ուղղափառ եկեղեցու հետևորդ համայնքը
Կիլիկիայում ԺԳ-ԺԴ դդ. կեսերին 366

Հովհաննես Ա. Իգիթյան

Սարգիս Փիլիսոփա Բ-ի կորսված 532-ամյա պարբերաշրջանները.

Վերականգնում մաս երկրորդ. Հայոց շարժական տոմար-պարբերաշրջանը..... 379

Գոռ Գալստյան

Հովհաննես Սարկավագի «Մեկնութիւն տումարիս հայկազնեայ» երկը 425

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ**Անի Առաքելյան**

Հակոբ երեց Ամասիացի (Էմասիացի). հայկական ուշ միջնադարի

նորահայտ բանաստեղծը 445

Տաթևիկ Մանուկյան

Տեր Խաչատուր Քուրտանցին և նրա փերականությունը 476

Վանո Եղիազարյան, Անի Ժ. Ավետիսյան

Մի անտիպ երկլեզվյան տաղ Հովհաննես Թյկուրանցուց 504

ՀԱՂՈՐԴՈՒՄ**Լուսինե Սարգսյան**

Հայ ձեռագրավեստի ուսումնասիրությունը թվային դարում..... 509

Բանբեր Մատենադարանի հանդեսի հոդվածների ձևավորմանը

վերաբերող պահանջներ 525

CONTENTS
HISTORY**Gagik Danielyan**

Official Correspondence and Diplomatic Gifts in the
Armenian-Mongol Relations (Parts 1 and 2).....5

Styopa Petoyan

Publishing Activities of Vahan and Smbat Dadyants‘
in Shushi in the 1880s.....33

Ani Voskanyan

The Armenians’ Attempts to Revive the Economy in Adana
Province Between 1910 and 1914.....55

PHILOLOGY**Gevorg Ter-Vardanyan**

Yovhannēs Vardapet (Archimandrite) Zohrapean as
Text Critic and Scribe, His Autobiography.....67

Ovsanna Khachatryan

The *Kafas* of Grigor Khat‘ets‘i as the First Samples
in the Collections of Sacred Chants91

Hayk Hambardzumyan

Food Motives in the Epic “Daradevils of Sassoun” and in the
Armenian Medieval Literature: Heroes' Menu.....105

Garnik A. Harutyunyan

The Recension of the “Testament of the Passion
[of Christ]” or the Sermon of Good Friday by Catholicos Simeon I Erewants‘i133

Hasmik Badalyan

Dzorovank‘ Monastery of Cilician Armenia
and its Scriptorial Heritage.....150

Deacon David Sahakyan

Once Again on the Authorship and Date of “The Oft-Repeated Discourses
of St. Gregory the Illuminator”: on the Occasion of a Recent Publication
by Abraham Terian.....165

ART

Yvette Tajarian, Sarah Laport-Eftekharyan

A Newly Discovered Illustrated Page as a
Symbol of Cultural Influences.....186

Siranush Beglaryan

The Mariological Basis of T'oros Taronats'i's Iconography.....196

NATURAL SCIENCES

Stella Vardanyan

The Ancient Armenian Recipe for Preparing Ointment and Incense
According to Xenophon's *Anabasis*.....215

Karine Mosikyan

Physiognomical Works in the Manuscripts
of Matenedaran.....225

**PROCEEDINGS OF THE 7TH INTERNATIONAL CONFERENCE OF
YOUNG RESEARCHERS (NOVEMBER 25-27, 2021)**

Zohrab Gevorgyan

Paper, Everyday Life and Social Transformations
in Cilician Armenia.....248

Gevorg Kazaryan

The Tradition of the Liturgy Behind Closed Doors in the Armenian
Apostolic Church Rite.....259

Andranik Yesayan

The Province of Zakam in the 17th Century and the First
Quarter of the 18th Century.....285

Tigran Grigoryan

The Creation of Adam or Ancient of Days?: The Prophetic Vision of Daniel
in Noravank' (a Discussion on the Basis of Canonical and Apocryphal Texts).....299

Shoghakat Devrikyan

Full-Page Engravings with Images of Gregory the Illuminator in the
Three Synaxaria Published in the 18th Century in Constantinople.....331

Greta Gasparyan

One Page of the Gospel M 6772 Illustrated in New Julfa in the
Context of Western Christian Art.....342

Armine Petrosyan

Birds Combat Scene in Armenian Church Decoration of X-XIV
Centuries: Iconography and Symbolic Perceptions.....353

Vahe Avetisyan

Greek-Orthodox (Byzantine) Community in Cilicia
From the XIII - to the Middle of the XIV Century.....366

Hovhannes A. Igityan

The Lost 532 Years Calendar-Cycles of Sargis Philosopher the Second.
Reconstruction (Part II. The Armenian Non-Fixed
Calendar and the 532-Year Cycle).....379

Gor Galstyan

The *Commentary of the Armenian Calendar*
by Yovhannēs Sarkavag.....425

PUBLICATIONS**Ani Arakelyan**

Priest Yakob Amasiats‘i (Emasiats‘i):
An Unknown Late Medieval Armenian Poet.....445

Tatevik Manukyan

Ter Khach‘atur K‘urtk‘ants‘i and His Grammar.....476

Vano Yeghiazaryan, Ani J. Avetisyan

An Unpublished Poem by Yovhannēs T‘lkurants‘i.....504

REPORT**Lusine Sargsyan**

Study of Armenian Manuscript Art in Digital Era.....509
Requirements for the articles in the journal of The *Bulletin of Matenadaran*.....525

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

Гагик Даниелян

Официальная переписка и дипломатические дары в Армяно-Монгольских отношениях (части 1 и 2).....5

Стёпа Петоян

Издательская деятельность Ваана и Смбата Дадянцев в Шуши в 1880-х гг.....33

Ани Восканян

Попытки армян восстановить экономику в провинции Адана в 1910–1914 гг.....55

ФИЛОЛОГИЯ

Геворг Тер-Варданян

Рукописное и текстологическое наследие вардапета Ованеса Зограбяна и его автобиография.....67

Овсанна Хачатрян

Кафы Григора Хлатеци как первые образцы жанра в певческих сборниках-гандзаранах.....91

Айк Амбарцумян

Пищевые мотивы в эпосе «Сасна црер» (Давид Сасунский) и в армянской средневековой литературе: меню героев.....105

Гарник А. Арутюнян

Редакция “Завещания страстей...”, или проповеди Страстной пятницы католикоса Симеона I Ереванци.....133

Асмик Бадалян

Рукописное наследие монастыря Дзорованк Киликийской Армении.....150

Диакон Давид Саакян

Вновь об авторстве и времени создания “Многовещательных речей св. Григория Просветителя” (по поводу публикации Абраама Терьяна).....165

ИСКУССТВО

Ивет Таджарян, Сара Лапорт-Эфтехарян

Новооткрытая иллюстрированная страница как символ культурных влияний..... 186

Сирануш Бегларян

Мариологическая основа иконографии Гороса Таронаци..... 196

ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ

Стелла Варданян

Древний армянский рецепт приготовления мази и благовония из «Анабасиса» Ксенофонта 215

Карине Мосикян

Сочинения о физиогномике в рукописях Матенадарана 225

ИЗ МАТЕРИАЛОВ 7-ОЙ МЕЖДУНАРОДНОЙ КОНФЕРЕНЦИИ МОЛОДЫХ УЧЕНЫХ (25-27 НОЯБРЯ, 2021 Г.)

Зохраб Геворгян

Бумага, повседневная жизнь и социальные преобразования в Киликийской Армении..... 248

Геворг Казарян

Традиция Литургии при Закрытых Дверях в обиходе Армянской Апостольской церкви 259

Андраник Есяян

Провинция Закам в 17 – первой четверти 18 в..... 285

Тигран Григорян

“Сотворение Адама” или “Ветхий Днями”: пророческое видение Даниила в Нораванке (анализ по Каноническим и Апокрифическим текстам) 299

Шогакат Деврикян

Полнолистовые гравюры с изображением Григория Просветителя в трех сборниках «Синаксария», изданных в XVIII веке в Константинополе..... 331

Грета Гаспарян

Страница Евангелия М 6772 в контексте Западно-христианского искусства..... 342

Армине Петросян

Сюжет с «Борющимися» птицами в церковной пластике
 Армении X-XIV вв.: иконография и символизм.....353

Ваэ Аветисян

Греко-Православная (Византийская) община
 в Киликии XIII - середины XIV вв.....366

Ованнес А. Игитян

Утраченный 532-летний календарный цикл Саргиса Философа второго.
 Реконструкция (часть II. Армянский подвижный календарь и 532-летний цикл).....379

Гор Галстян

Толкование армянского
 календаря Ованнеса Саркавага.....425

ПУБЛИКАЦИИ**Ани Аракелян**

Иерей Акоб Амасийский (Эмасийский),
 неизвестный армянский поэт Позднего Средневековья.....445

Татевик Манукян

Тер Хачатур Куртканци и его грамматика.....476

Вано Егиазарян, Ани Ж. Аветисян

Неизданное двуязычное стихотворение
 Ованнеса Тлкуранци.....504

СООБЩЕНИЕ**Лусине Саргсян**

Изучение армянского рукописного искусства в цифровую эпоху.....509

Требования к оформлению статей в журнале *Вестник Матенадарана*.....525

ԲԱՆԹԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 33

BULLETIN OF MATENADARAN

Volume 33

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 33

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ Անահիտ Խանգաղյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի
Շապիկին՝ Թորոս Տարոնացի, Տիրամայրը մանկան հետ, Մատթեոսի
Ավետարանի անվանաթերթ, ՄՄ 6289, էջ 12ա
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 33,5

տպաքանակ՝ 150

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի

հրատարակչական բաժին, ֆ. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

publishing.matenadaran@gmail.com

Ամսագրի թվային տարբերակը՝

banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/